

է՛յ, կանանչ ախպէր, դուն բարձր եկար.
Դուն բարձր եկար, իմ կանանչ ախպէր *):

Մով-մանուշակով ծաղկուն սարերէն
Արտուտն ու արօս ինձի ձէն տուին.
Ու դարնան անուշ արե ոսկեղէն
Ինձի ձէն տուին՝ սար ու ձոր ելնեմ:
— Երանիկ ձեզի, սարեր ու ձորեր,
Նշխուն հագեր էք դարնան զուքսերով.
Ա՛խ, սիրտս մեռաւ ծով-դարձերի մէջ,
Գարնան զուքսերին մնաց կարօտով:
Ա՛խ, սարեր, ձորեր, դձուք առաջուանն էք,
Բլբուլ ու բաղեր, դձուք առաջուանն էք.
Է՛խ, մեռակ ես եմ փոխուեր ու չորցեր,
Բլբուլ ու վարդեր, դուք առաջուանն էք:
Ա՛խ, ես եմ փոխուեր ու աշխարհի մէջ
Ղարիբ ու հիւանդ ճամբորդ եմ դառեր.
Ճամբես մոլորեր, կ'երթամ փշի մէջ.
Սարեր ու ձորեր, դձուք առաջուանն էք:
Կեանքիս աղբուրը մարդիկ քամեցին,
Իմ փայ-աշխարհը դարձրին մութ զնդան,
Ա՛խ, սիրտս ու հոգիս հալ ու մաշ արին.
Ու ծաղիկ-կեանքիս փոքին գերեզման:
Կ'երթամ փշի մէջ, գերեզման կ'երթամ՝

*) Մեր ժողովուրդը դարնան գալը բարձր եկա՛ր, կանանչ ախպէրս
ասելով է ողջունում. իսկ ձմրան գալը՝ բարձր եկար, ճերմակ ախպէրս:

Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ.
Ա՛խ, տանեմ սիրտս, տանեմ գերեզման. —
Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ
Ազիզ մեռելս տանեմ հողին տամ...

Է՛յ, կանանչ ախպէր, կուգաս գալ տարի,
Ու գերեզմանս մամռով կը զուբես,
Իմ կանանչ ախպէր, գալդ միշտ բարի,
Խեղճ գերեզմանս մտքէդ չը բցես...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ